

## ՄԻ ԱՆՁՆԱՆՎԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

### Ա. Ա. ԽՈՒՂԱԿԵՐՂՅԱՆ

Հայ ազգային, հոգևոր նշանավոր գործիչներից էր Մելքիսեդեկ (Գարեգին) արքեպիսկոպոս Մուրադյանը, որը դեռևս աշխարհական եղած տարիներից նվիրվել էր հայ մանուկների լուսավորության, կրթության, հոգևոր դաստիարակության դժվարին, ջանք ու եռանդ պահանջող գործին: Շեշտված, վառ անհատականությամբ էր նա, որ ոգեշնչել է ժամանակի գրողներին, նախակերպարն է եղել Պերճ Պռոշյանի «Սկիզբն երկանց» և Մուրացյանի «Խորհրդավոր միանձնուհի» վեպերի գլխավոր հերոսների<sup>1</sup>: Մարկոս Աղաբեկյանը նրան է նվիրել «Գարեգին» պոեմը: Դակատագիրը որքան անողոր է եղել նրա նկատմամբ կենդանության օրոք, ասես անարդարացի վերաբերմունքը շարունակվել է մահ հետագայում: Նրա գրավոր ահռելի ժառանգությունը՝ հողվածներ, թարգմանություն-փոխադրություններ, մենագրություններ, ցարդ հիմնովին չի ուսումնասիրված: Մինչև օրս Հայ եկեղեցու պատմության մասնագետները հստակ գնահատական չեն տվել կաթողիկոսական երկու ընտրություններին. ոուսաց ցարի կամքով Կաթողիկոս է օծվել ուրիշը: Միայն, 2002 թ. Մուրադյանցի մատենագիտությունը հեղինակային 100 օրինակ տպաքանակով հրատարակել է Բալարեկ Մեյլանը<sup>2</sup>:

1981 թ. Մ. Սանթրոսյանը հրատարակել է «Ներսիսյան դպրոցի պատմություն» աշխատությունը, որտեղ ոչ մի խոսք ու հիշատակություն չկա այդ դպրոցի սան, ապա մահ աշխատակից Գարեգին Մուրադյանցի մասին<sup>3</sup>:

Հանրագիտարանային բնույթի գրականության մեջ նույնպես կցկտուր են տեղեկությունները Մուրադյանցի մասին: Եթե «Հայկական սովետական հանրագիտարանում»<sup>4</sup>, «Մուրադյանց Գարեգին» հոդվածում հիմնական զծերով ներկայացված է գործչի կենսագրությունը, սակայն թերի է նրա աշխատությունների ցանկը, ապա «Կենսագրական բառարանում»<sup>5</sup> անտեսվել են կարևոր մանրամասներ, և դարձյալ աղավաղված է (Մելիքսեթեկ) հոգևոր գործչի անունը, կարծում ենք՝ հրատարակիչների մեղքով:

2002 թ. «Չանգակ» հրատարակչությունը լույս է ընծայել Հրաչյա Աճառյանի «Հայ գաղթականության պատմություն» աշխատությունը, որտեղ ակնառու հոգևոր գործչի անվան բոլոր հիշատակումները աղավաղված են (տպագրված է

<sup>1</sup> Ի դեպ, «Հայ գրականության պատմություն» ակադեմիական բազմահատորյակի հեղինակները հիշյալ վեպերի գլխավոր հերոսների նախատիպ են համարում Պետրոս Շանչյանցին: Սակայն, անգամ հերոսների անունները ունեն ենթիմաստ ու հստակ ակնարկում են ու մատնացույց անում Մուրադյանցին (տե՛ս «Հայ մոր գրականության պատմություն», Եր., 1964, հ. 3-րդ, էջ 258-259):

<sup>2</sup> Տե՛ս Բ. Մեյլան, Կաթողիկոս (ընտրված, բայց չհաստատված), Մելքիսեդեկ-Գարեգին արքեպիսկոպոս Մուրադյան, Եր., 2002:

<sup>3</sup> Տե՛ս Մ. Սանթրոսյան, Ներսիսյան դպրոցի պատմություն, Եր., 1981:

<sup>4</sup> «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 8, Եր., 1982, էջ 94:

<sup>5</sup> Տե՛ս Գ. Ստեփանյան, Կենսագրական բառարան, հատ. Գ, գիրք 1, Եր., 1990, էջ 92:

Մեխքսեդեկ)՝: Հր. Աճառյանը եղել է Մուրադյանցի սաներից մեկը և անկարող էր սխալվել:

Նման օրինակները կարելի է շարունակել, բավարարվենք այսքանով:

Սակայն, այն քչերն էլ (բացի Բ. Մեյանից), ովքեր անդրադարձել են մոռացուքյան քողով պատված անցյալի մեր երևելիներից մեկին՝ Մուրադյանցին, չեն կասկածել անգամ, որ Գարեգինը ամենևին էլ նրա ավագանի անունը չէր: Մուրադյանցի բարեպաշտ ծնողները իրենց որդուն կոչել էին քրիստոնյաների կողմից ոչ պակաս սիրված Գևորգ անվամբ, ու ոմանք էլ փաղաքշարար Գեորգի էին կանչում: Իսկ ինչպե՞ս ծնվեց Գարեգինը...

Մուրադյանցը ծնվել է 1836 թ., Տավուշ գյուղում: Մերում էր Լոռուց Շամշադին տեղափոխված ընտանիքից: Հայրը՝ տեր Գրիգորը, գյուղի քահանան էր: Նախնական գրագիտություն սովորել է հորից: Ընտանիքում կարևորում էին զավակների կրթության հարցը, ուստի տղային ուղարկում են Սանահնի վանքի ժառանգավորաց դպրոցում ուսանելու: 13 տարին հազիվ բոլորած պատանուն, իբրև ամենից առաջադեմ աշակերտի, Ներսես Ե Աշտարակեցի Կաթողիկոսի (1843-1857) հրամանով 1849թ.<sup>7</sup> տեղափոխում են Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոց: Կարճ ժամանակ անց բնատուր ձիրքի ու աշխատասիրության շնորհիվ նա արդեն իր վրա էր հրավիրել ուսուցիչների ուշադրությունը: «Գարեգինը արդեն ճանաչում է թե՛ մեծը, թե՛ փոքրը, ընկերները նրան սիրում են և նրա իշխանութեանը ենթարկում: Նա իր բնատուրութեամբը համակրելի և սիրելի էր, և մի և նույն ժամանակ գիտեր իր ընկերների մտքի վերայ իշխել», - վկայում են ժամանակակիցները՝: «Առաջին աշակերտն ու դպրոցի ծաղիկն ու ընդհանուրի սիրելին էր Գարեգին Մուրադյանցը, այսօր *Մեխքսեդեկ* եպիսկոպոսը»<sup>8</sup>: Նրան ամենքը ճանաչում են, ամենքը սիրում են, ամենուր մեծ տեղ ունի, ամենքի տանը ուսուցիչ է, խորհրդատու է, բոլորը հավատում ու վստահում են: Եվ ուր էլ գնա, նրանից անբաժան է Եղիշեի «Պատմությունը», որն էլ անվանատու դարձավ պատանու համար:

Մուրադյանցի ճեմարանական մտերիմ ընկերներից մեկը՝ Պերճ Պոռոջյանը հիշում է. «Եղիշեի պատմությունը Շամշյանցի խորհրդով համարյա կուլ էինք տվել և ...ամեն մեկս միաբանական խորհրդակցությամբ մի-մի անուն սեփականացրել էր Վարդանանց հերոսների անուններից»<sup>10</sup>: Մուրադյանցին բաժին էր ընկել Եղիշեի հերոսներից Գարեգին Սրվանձտյանցի անունը՝ Գարեգին, որը պետք է սովեր գցեր ու մոռացներ նրա ավագանի անունը: «Մեզինց միայն Գարեգինը պահեց յուր անունը», - ամփոփում է Պոռոջյանը:

Թիֆլիսի եկեղեցիներում քարոզչական լայն գործունեություն ծավալած ներսիսյանցիներին խրախուսելու նպատակով Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսես Աշարակեցին երիտասարդներին արժանացրել է ուրարների: «Կաթողիկոսը կանգնեց, «պահպանիչ» ասեց: Ապա մեկ-մեկ մեզ մոտ կանչելով, յուր ձեռքով վերցնում էր ուրարները ու ձգում մեր ուսերին: Սկսվեց Գարեգին Մուրադյանից»<sup>11</sup>:

<sup>6</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Հայ գաղթականության պատմություն, Եր., 2002, էջ 560-562:

<sup>7</sup> Գյուտ ավ. Բահ. Աղանյանցը 1848 թվականն է հիշատակում (տե՛ս «Լուսնայ», Թիֆլիս, 1903, Բ, էջ 223):

<sup>8</sup> «Արևելեան մամուլ», Իզմիր, 1884, թ. 3:

<sup>9</sup> Պ. Պոռոջյան, Երկերի ժողովածու, հ. 7, Եր., 1964, էջ 91: Ուշագրավ է, որ դարձյալ աղավաղվել է հոգևոր գործչի անունը: Համոզված ենք, Պոռոջյանը չէր կարող սխալվել, ուստի սա հրատարակչական վրիպակ է:

<sup>10</sup> Անդ, էջ 94:

<sup>11</sup> Անդ, էջ 121:

Այն, որ Եղիշեի կոթողային երկը Մուրադյանցի ողջ կյանքի ընթացքում հոգու և մտքի գլխավոր ուղղորդիչներից է եղել, ակնհայտ է և՛ նրա գրական ժառանգությունից, և՛ ժամանակակիցների վկայություններից: Սակայն մինչև հիմա վրիպել էր ուշադրությունից, որ Գարեգին ոչ թե նրա ավագանի անունն է, այլ վերցված է V դարի գրական այդ հուշարձանից, իսկ ավագանի անունը Գևորգ է:

**А. А. ХУДАВЕРДЯН — К истории одного имени.** — В литературе о выдающемся церковном деятеле, редакторе и публицисте архиепископе Микаеле Мурадянце принято было считать, что до принятия сана он носил имя Гарегин, так как в то время он печатал статьи и книги под именем Гарегин Мурадянц. В статье, на основании воспоминаний друга его юности П. Прошяна, делается уточнение: архиепископ Мурадянц при рождении был назван Геворком.